

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԵՎԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ  
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԴԱՍԸՆԹԱՑ 2.4

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

*/քննության հարցերի պատասխաններ/*

ՄԱՐՏ 2020

ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐ

Հարց 1.

Ա.	30.09.2019 թ.-ին ավարտվող տարվա համար համախմբված համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն			
		՝000	Մեկնաբանություն	Միավորներ
	Հասույթ	90,200	$68000+32000*9/12-200*9$	1.5
	Ինքնարժեք	(61,885)	$(45000+24600*9/12)+200*9-160-75$	2
	Համախառն շահույթ	28,315		
	Իրացման ծախսեր	(3,325)	$(2500+1100*9/12)$	0.5
	Վարչական ծախսեր	(8,925)	$(2800+1500*9/12)-5000$	1
	Ֆինանսական ծախսեր	(693)	$(300+393)$	1
	շահույթ մինչև հարկերը	15,372		
	Շահութահարկի գծով ծախս	(3,800)	$(2900+1200*9/12)$	0.5
	<b>Տարվա շահույթ</b>	11,572		
	Այլ համապարփակ եկամուտներ			
	Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ	1,400	$1300+100$	1
	<b>Ընդամենը համապարփակ արդյունք</b>	12,972		
	<b>Տարվա շահույթ հասանելի</b>			
	Խմբին	11,247	$11,572-325$	
	Չվերահսկվող բաժնեմասին	325	Հաշվարկ 5	1
	<b>Ընդամենը համապարփակ եկամուտներ հասանելի</b>			
	Խմբին	12,627	$12972-345$	0.5
	Չվերահսկվող բաժնեմասին	345	$325+100*0.2$	
				9

Բ	<b>Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 30.09.2019</b>		
		՝000	
	<b>Ակտիվներ</b>		<b>Մեկնաբանություն</b>
	Ոչ-ընթացիկ ակտիվներ		<b>Միավորներ</b>
	Շենք, շինություն և սարքավորումներ	33,225	19800+12900+500-75+100
	Գուդվիլ	8,536	Հաշվարկ 2
		41,761	
	Ընթացիկ ակտիվներ		
	Պաշարներ	5,940	4500+1600-160
	Դեբիտորական պարտքեր	5,500	5300+2000-1600-200
	Դրամական միջոցներ	400	200+200 -ի վճարումը ցույց է տրված ստացված
		11,840	
	<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>53,601</b>	
	<b>Մեփական կապիտալ և պարտավորություն</b>		
	Մեփական կապիտալ		
	Բաժնետիրական կապիտալ ( յուրաքանչյուրը 1000 դրամ)	16,800	12000+4800-բաժնետոմսերի թողարկում
	Էմիսիոն եկամուտ	9,600	4800*2-բաժնետոմսերի թողարկումից առաջացած էմիսիոն եկամուտ
	Կուտակված շահույթ	4,347	Հաշվարկ 4
	Վերագնահատման պահուստ	2,580	2500+100*0.8 –դուստր ընկերության 100մլն-ի վերագնահատման 80 տոկոսը
	Զվերահսկվող բաժնեմաս	4,045	Հաշվարկ 3

	Ընդամենը սեփական կապիտալ			
		37,372		
	Ոչ ընթացիկ պարտավորություններ			
	Վարկեր և փոխառություններ	2,500	2500+1000-1000 –ներխամբային փոխառություն	1
	Ընթացիկ պարտավորություններ			
	Հետաձգված պարտավորություն Դուստր ընկերությանը	5,629	հաշվարկ 2+393 ֆինանսական ծախսեր	1
	Առևտրային Կրեդիտորական պարտքեր	4,400	3200+2800-1600	1
	Բանկային օվերդրաֆտ	2,100		0.5
	Շահութահարկի գծով պարտավորություն	1,600	1500+100	0.5
		13,729		16
	Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություն	<b>53,601</b>		

### Հաշվարկներ

Հաշվարկ1	01.01.2019	30.09.2019	Մեկնաբանություն
Դուստր կազմակերպության զուտ ակտիվները			
Բաժնետիրական կապիտալ	9,000	9,000	
Կուտակված շահույթ	1,100	3,800	1100=3800-3600*9/12
Իրական արժեքի ճշգրտումներ-սարքավորում	500	500	
մաշվածության ծախս -9 ամսվա		(75)	75=500/5*9/12
	10,600	13,225	

Տարբերություն	2,625		2625=12225-9600
---------------	-------	--	-----------------

<b>Հաշվարկ 2</b>		<b>Մեկնաբանություն</b>
Գուղվիլ		
Բաժնետոմսերի թողարկում	14,400	9000*0.8=7200 գնված բաժնետոմսեր, որի համար թողարկվել է Մայր ընկերության 4800 բաժնետոմս (7200/3*2), 4800*3=14400 արժեքով
Հետաձգված վճարում	5,236	7200*0.8*1/(1+0.1)
Չվերահսկվող բաժնեմասս գնման պահին	4,500	1800*2.5
Զուտ ակտիվների արժեք	(10,600)	Հաշվարկ 1
Գուղվիլ գնման պահին	13,536	
Արժեզրկում	(5,000)	Տրված է խնդրում
Գուղվիլ հաշվետու ժամանակաշրջանում	8,536	

<b>Հաշվարկ 3</b>		<b>Մեկնաբանություն</b>
Չվերահսկվող բաժնեմասսի հաշվարկ		
Չվերահսկվող բաժնեմասս գնման պահին	4,500	Հաշվարկ 2
Հետձեռքբերումային շահույթ	525	2625 (հաշվարկ)*0.2
Հիմնական միջոցի վերագնահատումից աճ	20	100*0.2
Գուղվիլի արժեզրկում	(1,000)	5000*0.2
	4,045	

<b>Հաշվարկ 4 – Համախմբված չբաշխված շահույթ</b>		<b>Մեկնաբանություն</b>
Մայր կազմակերպության կուտակված շահույթ	6,800	խնդրից
Դուստրի հետձեռքբերումային շահույթ	2,100	2625*0.8
Գուղվիլի արժեզրկում	(4,000)	5000*0.8

Ֆինանսական ծախս հետաձգված վճարման գծով	(393)	4655*10%*9/12
Ներխաբային վաճառքից չիրացված շահույթ	(160)	800*25/125
	4,347	

Հաշվարկ 5		Մեկնաբանություն
Տարվա շահույթ հասանելի չվերահսկվող բաժնեմասին		
Տարվա շահույթ	2700	3600*9/12
Գուղվիլի արժեզրկում	-1000	
Սարքավորման մաշվածք	-75	
Ընդամենը	1625	
Չվերահսկվող բաժնեմասին	325	1625*0.2

Բացատրական նյութ		
1.Երբ կան դրամական միջոցներ ճանապարհին, ինչպիսին է 200 մլն-ի վճարումը մեր օրինակում, ապա տրվում են հետևյալ ձևակերպումները` Դեբետ Դրամական միջոցներ 200 մլն Կրեդիտ Դեբիտորական պարտքեր 200 մլն		
2.Հիմնական միջոցների վերագնահատումը պետք է ճանաչել վերագնահատման պահուստում, ինչը և կատարվել է` տալով հետևյալ ձևակերպումները		
Դեբետ Հիմնական միջոցներ 100 մլն		
Կրեդիտ Չվերահսկվող բաժնեմաս 20 մլն		
Կրեդիտ Վերագնահատման պահուստ 80 մլն		

**Հարց 2.**

Ա		՝000	Մեկնաբանություն		Միավոր		
	Հասույթ	360,000					
	Ինքնարժեք	(303,250)	286700+4500+2800+6250+3000		<b>2</b>		
	Համախառն շահույթ	56,750					
	Իրացման ծախսեր	(21,100)					
	Վարչական ծախսեր	(18,000)					
	Ֆինանսական ծախսեր	(4,980)	500+2180+2300		<b>1.5</b>		
	Շահույթ մինչև հարկերը	12,670					
	Շահութահարկի գծով ծախս	(3,500)	Հաշվարկ 5		<b>1.5</b>		
	<b>Տարվա շահույթ</b>	9,170					
	Այլ համապարփակ եկամուտներ						
	Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ	4,000	Հաշվարկ 3		<b>1</b>		
	<b>Ընդամենը համապարփակ եկամուտներ</b>	13,170					
					<b>6</b>		
Բ		Սեփական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	կուտակված շահույթ	փոխարկելի պարտատոմսերի՝ սեփական կապիտալի մաս	Վերագնահատման պահուստ	Միավորներ
	Հաշվեկշիռ 01.01.2019	45,000	5,000	8,000			
	Նախորդ տարվա սխալի ուղղում			(1,000)			<b>0.5</b>
	Վերաներկայացված հաշվեկշիռ	45,000	5,000	7,000			
	Բաժնետոմսերի թողարկում	9,000	4,500				<b>1</b>
	Տարվա շահույթ			9,170			<b>0.5</b>

	Փոխարկելի պարտատոմսերի թողարկում				2,745		<b>0.5</b>
	Վերագնահատում					4,000	<b>0.5</b>
	Պահուստների շարժ			500		(500)	<b>1</b>
	Հաշվեկշիռ 31.12.2019	54,000	9,500	16,670	2,745	3,500	<b>4</b>

Գ			'000	Մեկնաբանություն	Միավորներ
	<b>Ակտիվներ</b>				
	Ոչ-ընթացիկ ակտիվներ				
	Շենք, շինություն և սարքավորումներ		61,450	Հաշվարկ 3	<b>3</b>
			61,450		
	Ընթացիկ ակտիվներ				
	Պաշարներ		59,000	տրված է	<b>0.25</b>
	Դեբիտորական պարտքեր		47,300	51300-4000	<b>1</b>
			106,300		
	Ընդամենը ակտիվներ		<b>167,750</b>		
	<b>Սեփական կապիտալ և պարտավորություններ</b>				
	Սեփական կապիտալ				
	Բաժնետիրական կապիտալ ( յուրաքանչյուրը 500 դրամ)		54,000		
	Էմիսիոն եկամուտ		9,500		
	Կուտակված շահույթ		16,670		
	Վերագնահատման պահուստ		3,500		
	փոխարկելի պարտատոմսերի՝ սեփական կապիտալի մաս		2,745		
	Ընդամենը Սեփական կապիտալ		<b>86,415</b>		

	Ոչ ընթացիկ պարտավորություններ			
	Փոխարկելի պարտատոմս	27,935	Հաշվարկ 2	1.5
	Հետաձգված հարկային պարտավորություն	3,000	Հաշվարկ 5	1
	Վարձակալական պարտավորություններ	15,230	Հաշվարկ 3	1
		46,165		
	Ընթացիկ պարտավորություններ			
	Վարձակալական պարտավորություններ	4,070	Հաշվարկ 3	1
	Առևտրային Կրեդիտորական պարտքեր	27,300		0.25
	Բանկային օվերդրաֆտ	1,300	տրված է	0.25
	Շահութահարկի գծով պարտավորություն	2,500	տրված է	0.75
		35,170		10
	Ընդամենը Սեփական կապիտալ և պարտավորություն	167,750		

<b>Հաշվարկ 1</b>		
Որպեսզի վերացնենք տարանցիկ հաշիվը, հարկավոր է տալ հետևյալ ձևակերպումները		
	'000	
Դերետ տարանցիկ հաշիվ	13,500	
Կրեդիտ բաժնետիրական կապիտալ	9,000	18000*0.5
Կրեդիտ էմիսիոն եկամուտ	4,500	18000*0.25
Թողարկված բաժնետոմսերի քանակ 18000	45000/0.5/5	

<b>Հաշվարկ 2</b>	'000	<b>Մեկնաբանություն</b>	Ներկա արժեքի գործակից	Դրամական հոսքերի ներկա արժեք	<b>Մեկնաբանություն</b>
------------------	------	------------------------	-----------------------	------------------------------	------------------------

Փոխարկելի պարտատոմսից դրամական արտահոսք					
Տարի 1	1,500	300*100000*5%	0.93	1,395	1500*0.93
Տարի 2	1,500	300*100000*5%	0.86	1,290	1500*0.86
Տարի 3	31,500	1500+30000	0.78	24,570	31500*0.78
				27,255	

	Փոխարկելի պարտատոմսերի՝ Սեփական կապիտալի մաս			2,745	30000-27255
Տարիներ	Պարտավորություն 01.01.2019	Ֆինանսական ծախս- 8%	վճարում	Պարտավորություն 31.12.2019	
1	27,255	2,180	(1,500)	27,935	

<b>Հաշվարկ 3</b>					
	01.01.2019	Վերագնահատում	Վերագնահատման պահուստ	Մաշվածք-ինքնարժեք	31.12.2019
Վարձակալված շենք	32,000	36,000	4,000	4,500	31,500
Շենք և շինություն	14,000			2,800	11,200
Վարձակալված սարքավորում	25,000			6,250	18,750
					61,450
Պահուստի շարժը ձևակերպվում է մինչև վերագնահատումը և վերագնահատումից հետո մաշվածքների տարբերությամբ					
	000				
Մինչև վերագնահատում մաշվածք	4,000	48000/12			

Վերագնահատումից հետո մաշվածք	4,500	36000/8			
Տարբերություն	500				
Դեբետ Վերագնահատման պահուստ	500				
Կրեդիտ Զբաղիված շահույթ	500				
Տարիներ	Վարձակալված սարքավորման գծով պարտավորությունն 01.01.2019	Ֆինանսական ծախս 10 տոկոս	վճարում	Վարձակալված սարքավորման գծով պարտավորությունն 31.12.2019	
1	23,000	2,300	(6,000)	19,300	
2	19,300	1,930	(6,000)	15,230	
	Վարձակալության գծով ընթացիկ պարտավորություն			4,070	19300 - 15230
	Ոչ ընթացիկ պարտավորություն			15,230	

<b>Հաշվարկ 4</b>			
1 մլն-ը կճշգրտվի նախորդ տարվա կուտակված շահույթում, իսկ 3 մլն-ը այս տարվա շահույթում:			
	'000		
Դեբետ Կուտակված շահույթ	1,000		
Դեբետ Ընթացիկ շահույթ	3,000		
Կրեդիտ Դեբիտորական պարտքեր	4,000		

**Հաշվարկ 5**

**Մեկնաբանություն**

Հարկային ծախս	2500	Տրված է
Նախորդ տարի պակաս հաշվեգրված ծախս	1200	Տրված է
Հետաձգված հարկի նվազում	-200	
Շահութահարկի գծով ծախս	<u>3500</u>	
Հետաձգված հարկային պարտավորություն 01.01.2019	3200	Տրված է
Հետաձգված հարկային պարտավորություն 31.12.2019	3000	12000*0.25
Տարբերություն	-200	

**Դ.** Ստորև թվարկված են գործակիցներով վերլուծության թերությունները և այդ թերությունները մեղմելու ուղիները.

1. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների տարբերություններ: Տարբեր ընկերություններ որդեգրում են տարբեր հաշվապահական հաշվառման քաղաքականություններ, և այս տարբերությունները անպայման արտացոլվում են վերլուծվող ֆինանսական հաշվետվություններում: Պետք է զգոն լինել և հայտնաբերել քաղաքականության տարբերությունները՝ փորձելով այնպես անել, որ դրանք վերլուծությունների վրա որքան հնարավոր է չազդեն:
2. Գործունեության սեզոնայնություն: Գործունեության սեզոնային բնույթը կարող է մեծապես փոխել հաշվետվություններում արտացոլված պատկերը: Եթե սեզոնային բիզնես ենք վերլուծում և համադրում, պետք է ուշադիր լինել, որ հաշվետվությունները պատրաստված լինեն միևնույն ժամանակաշրջանի համար, այլապես վերլուծությունները կարող են սխալ պատկեր ձևավորել:
3. Հաշվետվությունները կարող են հանդիսանալ ստեղծագործ հաշվապահության գոհ: Այսպես, ընկերությունները՝ հատկապես նրանք, որոնց հաշվետվությունները պետք է դառնան վերլուծությունների թիրախ, ձգտում են իրենց արդյունքները որքան հնարավոր

Է լավ լույսի տակ ներկայացնել՝ շրջանցելով կամ սխալ կիրառելով բազմաթիվ ստանդարտներ: Որպես թերությունը մեղմող հանգամանք կարող է լինել առողիտ անցած հաշվետվությունների օգտագործումը: Հանուն արդարության նշենք նաև, որ ոչ բոլոր դեպքերում առողիտ անցած հաշվետվությունների օգտագործումը կարող է շրջանցել վերը նշված թերությունը:

4. Հաշվետվություններում ներառված են պատմական տեղեկություններ: Գնաճի պայմաններում, այսպիսի սկզբունքով պատրաստված հաշվետվությունները սովորաբար թերագնահատում են ակտիվները և գերագնահատում շահույթը, որն էլ իր ազդեցությունն է թողնելու հաշվարկված գործակիցների վրա: Անցյալի ցուցանիշները ոչինչ չեն կարող ասել ընկերությունների ապագայի, առաջընթացի հնարավորությունների և առաջիկա գործողությունների մասին : Անհրաժեշտ է հավաքագրել վերլուծվող կազմակերպությունների մասին որքան հնարավոր է դեպի ապագան միտված տեղեկություններ՝ ապագա պլաններ, սպասելիքներ, առաջիկա զարգացումներ և այլն: Նմանատիպ տեղեկատվությունը ևս պետք է զգուշությամբ օգտագործել, քանի որ այն կարող է լինել սուբյեկտիվ և գերագնահատված:

5. Միայն գործակիցները բավարար չեն համակողմանի վերլուծության համար: Ոչ ֆինանսական տեղեկատվության դերը չի կարելի թերագնահատել: Կազմակերպության համբավը, շուկայում զբաղեցրած տեղը, նորարարական միտքը, արտադրանքի որակը, աշխատողների բարեխղճության և մասնագիտական պատրաստվածության մասին տեղեկություններ չենք կարող գտնել որևէ ֆինանսական հաշվետվությունում, բայց թվարկվածները պակաս կարևոր չեն երդրումային որոշում կայացնելիս: Վերլուծական և որոշման կայացման գործընթացում անհրաժեշտ է ներառել որքան հնարավոր է շատ և տեղին ոչ ֆինանսական տեղեկատվություն:

Մանանա ՍՊԸ-ն գործակիցներով վերլուծությունների ներկայացված թերությունները և հաղթահարման ուղիները հաշվի առնելով, ինչպես նաև իր ներդրումային նպատակներից ու հնարավորություններից կախված՝ պետք է փորձի կատարել խելամիտ ընտրություն:

**1 միավոր յուրաքանչյուր ճիշտ արտահայտված մտքի համար**

**Հարց 3.**

<b>Դրամական հոսքերի մասին հաշվետվություն</b>	<b>2019</b>	<b>Մեկնաբանություն</b>	<b>Միավոր</b>
	´000		
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
շահույթ մինչև հարկումը	53,000		<b>0.5</b>
<b>Ճշգրտումներ</b>			
Ներդրումային եկամուտ	(3,000)		<b>0.5</b>
Ֆինանսական ծախսեր	17,000		<b>0.5</b>
Մաշվածություն	37,000	տրված է	<b>0.5</b>
Ամորտիզացիա	10,000	50000-40000	<b>0.5</b>
Ակտիվների օտարումից վնաս	10,000	Հաշվարկ 1	<b>0.5</b>
Գրանտային եկամուտ	(55,000)	տրված է	<b>0.5</b>
Պաշարների նվազում	15,000	155000-140000	<b>0.5</b>
Դեբիտորական պարտքերի աճ	(20,000)	110000-130000	<b>0.5</b>
Կրեդիտորական պարտքերի աճ	104,000	220000-116000	<b>0.5</b>
Երաշխիքային պահուստի աճ	5,000	72000-67000	<b>0.5</b>
Գործառնական գործունեությունից Դրամական միջոցների ներհոսք	173,000		
Վճարված տոկոս	(23,000)	Հաշվարկ 2	<b>1</b>
Վճարված հարկեր	(14,000)	Հաշվարկ 3	<b>1</b>
<b>Գործառնական գործունեությունից զուտ Դրամական միջոցների ներհոսք</b>	<b>136,000</b>		
Ներդրումային գործունեությունից Դրամական միջոցների հոսքեր			
Ակտիվների օտարումից ստացված միջոցներ	21,000	տրված է	<b>1</b>
Ստացված տոկոսներ	3,000	տրված է	<b>0.5</b>
Հիմնական միջոցների ձեռքբերում	(106,000)	Հաշվարկ 4	<b>2</b>

Ստացված պետական գրանտներ	50,000	Հաշվարկ 5	1
<b>Ներդրումային գործունեությունից զուտ Դրամական միջոցների արտահոսք</b>	(32,000)		
Ֆինանսավորման գործունեությունից Դրամական միջոցների հոսքեր			
Վարկերի վճարում	(34,000)	31000-65000	1
Վարձակալական վճարների վճարում	(7,000)	Հաշվարկ 6	2
Բաժնետոմսերի թողարկում	40,000	Հաշվարկ 7	2
Վճարված շահաբաժիններ	(12,000)	Հաշվարկ 8	1
<b>Ֆինանսավորման գործունեությունից զուտ Դրամական միջոցների արտահոսք</b>	(13,000)		
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	91,000		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	3,000	20000+3000-20000	0.5
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	94,000	95000+7000-8000	0.5
		Հաշվետվության տեսքի պահպանման համար	1
			20

### Հաշվարկներ

Հաշվարկ 1		

Ակտիվների վաճառքից վնաս՝ 10 միլիոն (31-21):		
<b>Հաշվարկ 2</b>		
	՝000	
Տոկոսային պարտավորություն տարեսկզբին	8,000	
շահույթ վնասում ճանաչված	17,000	
Տոկոսային պարտավորություն տարեվերջին	(2,000)	
Տարվա ընթացքում վճարված տոկոսներ- հաշվեկշռող մնացորդ	23,000	
<b>Հաշվարկ 3</b>		
Ընթացիկ և հետաձգված հարկեր տարեսկզբին	36,000	10000+26000
շահույթ վնասում ճանաչված	22,000	
Ընթացիկ և հետաձգված հարկեր տարեվերջին	(44,000)	14000+30000
Տարվա ընթացքում վճարված հարկ- հաշվեկշռող մնացորդ	14,000	
<b>Հաշվարկ 4</b>		
Հիմնական միջոցներ տարեսկզբին	496,000	
Մաշվածք	(37,000)	
Վերագնահատում	10,000	22000-12000
Վարձակալված հիմնական միջոցներ	28,000	
Օտարում	(31,000)	
Հիմնական միջոցներ տարեվերջին	(572,000)	
Տարվա ընթացքում ձեռք բերված – հաշվեկշռող մնացորդ	(106,000)	
<b>Հաշվարկ 5</b>		
Պետական շնորհ-գրանտ տարեսկզբին	95,000	

շահույթ/վնասում ճանաչված	(55,000)	
Պետական շնորհ-գրանտ տարեվերջին	(90,000)	
Տարվա ընթացքում ստացված գրանտ- հաշվեկշռող մնացորդ	(50,000)	
<b>Հաշվարկ 6</b>		
Վարձակալական պարտավորություն տարեկգրին	33,000	3000+30000
Տարվա ընթացքում ավելացում	28,000	
Վարձակալական պարտավորություն տարեվերջին	(54,000)	5000+49000
Վճարված պարտավորություններ - հաշվեկշռող մնացորդ	7,000	
<b>Հաշվարկ 7</b>		
	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ
Սկզբնական մնացորդ	200	35
Բոնուսային թողարկում	10	(10)
	210	25
Դրամական միջոցների դիմաց թողարկում , որը կլինի տարբերությունը	20	20
Վերջնական մնացորդ	230	45
<b>Հաշվարկ 8</b>	՝000	
Չբաշխված շահույթ տարեկգրին	147,000	
Տարվա շահույթ	31,000	
Չբաշխված շահույթ տարեվերջին	(166,000)	
Վճարված շահաբաժիններ- հաշվեկշռող մնացորդ	12,000	

#### Հարց 4

Ա. Համաձայն ՖՀՄՍ15 «Հասույթ գնորդների հետ պայմանագրերից» ստանդարտի հասույթի ճանաչումը պետք է անցնի հետևյալ 5 փուլերով.

1. Պայմանագրի նույնականացում/որոշակիացում/իդենտիֆիկացում: Պայմանագիրը 2 կամ ավելի կողմերի միջև կնքված համաձայնագիր է, որի հետևանքով կողմերի համար առաջանում են կիրառելի իրավունքներ և պարտականություններ: Պայմանագիր կարող է կնքվել թե բանավոր, թե գրավոր: Պայմանագրի կողմերը պետք է հավաստեն պայմանագրի գոյությունը և համաձայնեցրած լինեն պայմանագրային իրենց իրավունքները և պարտականությունները: Պայմանագրում պետք է հստակ արտացոլված լինեն մատուցվող ծառայությունները, մատակարարվող ապրանքները և իհարկե հատույցի չափը պայմանագրային պարտավորությունների կատարումից հետո: Հասույթի հավաքագրումը պետք է այս փուլում գնահատվի հավանական, այլապես հասույթի ճանաչման առաջին փուլի պայմանները բավարարված չեն և հասույթ հնարավոր չի լինի ճանաչել:

2. Կատարողական պարտավորությունների հայտնաբերում/որոշակիացում. այս փուլում ընկերությունները հստակորեն տարանջատում են իրենց կողմից ստանձնած բոլոր պարտավորությունները: Կատարողական պարտավորությունը ենթադրում է առանձնացվող ծառայությունների և ապրանքների մատակարարում: Օրինակ. եթե ընկերությունը վաճառում է սարքավորումներ և իրականացնում է վաճառված սարքավորումների տեխնիկական սպասարկում, ապա գործ ունենք երկու առանձնացնելի կատարողական պարտավորությունների հետ, որոնք այս փուլում հայտնաբերվում և առանձնացվում են:

3. Պայմանագրային հատուցումների որոշում/Գործարքի գնի որոշում-Գործարքի գինը կամ հատուցումը այն գումարն է, որը կատարող կողմը հավակնում է ստանալ պայմանագրային պարտավորությունները կատարելուց հետո: Այդ գինը կարող է լինել ինչպես ֆիքսված, այնպես էլ փոփոխուն, պարունակել պարգևավճարներ և այլն: Այն կարող է նաև ներառել ֆինանսավորման տարր, ինչպես այս խնդրի Գ կետում: Ֆինանսավորում հանդիսացող գումարները պետք է հստակ տարանջատել հասույթից և ճանաչել որպես տոկոսային եկամուտներ:

4. Բաշխել պայմանագրային հատուցումները/գինը 2-րդ փուլում առանձնացված առանձին կատարողական պարտավորություններին: Բաշխումը տեղի է ունենում ելնելով այդ պարտավորությունների առանձին շուկայական գներից, որի

համար լավագույն տեղեկատվության աղբյուր է համարվում նմանատիպ պայմաններում և նույն հաճախորդներին այդ պարտավորությունների առանձին առանձին կատարման շուկայական գինը:

5. Հասույթի ճանաչում ժամանակի կոնկրետ պահին, կամ ժամանակի մեջ բաշխված՝ կախված պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետայնությունից: Յուրաքանչյուր կատարողական պարտավորության համար պետք է հստակ հասկանալ, երբ են պայմանագրային պարտավորությունները համարվում կատարված՝ ժամանակի որ պահին: Եթե խոսքը գնում է ապրանքների վաճառքի մասին, ապա հենց վերահսկողությունը անցնում է գնորդ կողմին այդ պահին պարտավորությունը համարվում է կատարված և ճանաչվում է հասույթ: Ծառայությունների կամ կառուցման պայմանագրերի դեպքում վերահսկողությունը փոխանցվում է գնորդ կողմին ժամանակի մեջ բաշխված, հետևաբար հասույթ ճանաչվում է՝ ելենելով պարտավորությունների կատարման աստիճանից կամ ավարտունությունից:

**1 միավոր յուրաքանչյուր ճիշտ արտահայտված մտքի համար**

**Բ. 570,000 դրամ**

		Մեկնաբանություն	Միավոր
1 ամսվա սպասարկման արժեք	10,000	240000/24*1	<b>0.5</b>
Սարքավորման արժեքը	510,000	800000-240000-50000	<b>1</b>
Տեղակայման արժեք	50,000		<b>0.5</b>
	570,000		<b>2</b>

**Գ.**

		Մեկնաբանություն	Միավոր
Վաճառքի պահին պետք է ճանաչել հասույթ 30.09.2019-ին, հետևյալ կերպ			
Գումարի գեղչում – $1/(1+0.06)^2=0.889$			
Դեբետ Դեբիտորական պարտքեր	8,890	10000*0.889	<b>0.5</b>
Կրեդիտ Վաճառքից հասույթ	8,890	10000*0.889	<b>0.5</b>

		6 տոկոսի զեղչման գործակից 0.889	
31.12.2019 թ.-ին անհրաժեշտ է նաև ձևակերպել տոկոսային եկամուտ 3 ամսվա համար			
Դերետ Դեբիտորական պարտքեր	133	$8890 * 0.06 * 3/12$	<b>0.5</b>
Կրեդիտ Տոկոսային եկամուտ	133	$8890 * 0.06 * 3/12$	<b>0.5</b>
31.12.2020թ.-ին կրկին ճանաչել տոկոսային եկամուտ արդեն 1 տարվա համար 9023 ստացման ենթակա գումարի համար			
Դերետ Դեբիտորական պարտքեր	541	$9023 * 0.06$	<b>0.5</b>
Կրեդիտ Տոկոսային եկամուտ	541	$9023 * 0.06$	<b>0.5</b>
			<b>3</b>
Ստորև հաշվարկները բացատրական նպատակներով են և խնդրի պահանջի մաս չեն կազմում:			
30.09.2021 թ.-ին կհաշվեգրվեն նաև 9 ամսվա տոկոսները արդեն իսկ 9564 ստացման ենթակա գումարի համար			
Դերետ Դեբիտորական պարտքեր	436	$9564 * 0.06 * 9/12$	
Կրեդիտ Տոկոսային եկամուտ	436	$9564 * 0.06 * 9/12$	
Այդօրվա դրությամբ պարտքը մարվելու դեպքում			
Դերետ Դրամական միջոցներ /Բանկ	10,000		
Կրեդիտ Դեբիտորական պարտքեր	10,000		

## Դ. Ակտիվ - սահմանում

Կազմակերպության կողմից հսկվող ներկա տնտեսական ռեսուրս, որպես անցյալ դեպքերի արդյունք: Տնտեսական ռեսուրսը իրավունք է, որն ունի տնտեսական օգուտներ ստեղծելու պոտենցիալ:

**Պարտավորություն - սահմանում**

Կազմակերպության ներկա պարտականություն փոխանցելու տնտեսական ռեսուրս, որպես անցյալ դեպքերի արդյունք: Պարտականությունը պարտք է կամ պարտավորվածություն, որից խուսափելու գործնական կարողություն չկա:

Ե.

<b>Պայմանագիր 1</b>		<b>Մեկնաբանություն</b>	<b>Միավոր</b>
Հասույթ	8,000	10000*0.8	<b>0.5</b>
<b>Պայմանագիր 2</b>			
Հասույթ	4,800	8000*0.6	
Ինքնարժեքի ծախս	(6,800)	4800+2000 Պետք է ճանաչել այնքան, որ ամբողջ վնասը ներառենք ֆինանսական արդյունքներում անմիջապես, ինչպես անբարենպաստ պայմանագիր	<b>1</b>
	(2,000)	8000-4000-6000	
<b>Պայմանագիր 3</b>			
Հասույթ	1,000	4000*0.25	
Ինքնարժեքի ծախս	(625)	2500*0.25	
շահույթ	375		

ծախսեր մինչ հաշվետու ժամանակաշրջան	500	Տրված է	<b>0.25</b>
շահույթ մինչ օրս	375	հաշվարկից	<b>1</b>
Գրված հաշիվներ, որի դիմաց ստացել ենք վճարումներ	(750)		<b>0.25</b>
Պայմանագրային ակտիվ	125		<b>3</b>

### Հարց 5

Ա. Պարտքային գործիք հանդիսացող ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ երեք տեսակների.

1. իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող
2. իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամուտների միջոցով չափվող
3. ամորտիզացված արժեքով չափվող

Դասակարգումը կատարվում է, հիմնվելով երկու ստորև բերվածների վրա.

(ա) ֆինանսական ակտիվների կառավարման կազմակերպության բիզնես մոդելի. և

(բ) ֆինանսական ակտիվի դրամական միջոցների հոսքերի պայմանագրային բնութագրի:

Ֆինանսական ակտիվը պետք է չափվի ամորտիզացված արժեքով, եթե բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝ (ա) ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքման համար ակտիվներ պահելը.

(բ) ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամուտների միջոցով, եթե ակտիվի գծով դրամական հոսքերը բաղկացած են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսներից, իսկ կազմակերպության բիզնես մոդելը, ենթադրում է լավ հնարավորության դեպքում ակտիվի վաճառք, այլ պարագայում կհավաքագրվեն ակտիվից ստացվող հոսքերը:

Մնացած բոլոր դեպքերում, բացառությամբ վերոնշյալների, ակտիվները չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Սկզբնական ճանաչման պահին կազմակերպությունը պետք է ֆինանսական ակտիվը չափի իր իրական արժեքով:

**1 միավոր յուրաքանչյուր ճիշտ արտահայտված մտքի համար**

Բ.

31.12.2019				
Հաշվապահական հաշվեկշիռ			<b>Մեկնաբանություն</b>	<b>Միավոր</b>
Ոչ ընթացիկ ակտիվներ		՝000		
Պարտքային ֆինանսական գործիք		515	հաշվարկ 1	1
<b>Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն</b>				
ներդրումային եկամուտ		41	հաշվարկ 1	1
				<b>2</b>
Հաշվարկ 1				
Սկզբնական մնացորդ	ներդրումային եկամուտ -8 տոկոս	Շահաբաժիններ ստացված	Վերջնական մնացորդ	

500	40	(33)	507	
507	41	(33)	515	
Վճարված շահաբաժինների հաշվարկ		550*0.06		

Գ.

Ամսաթիվ	Բաժնետոմսերի քանակ միլիոններով	Բոնուսի գործակից	Ժամանակի գործակից	Միջին կշռված բաժնետոմսեր	Մեկնաբանություն	Միավոր
01.01.2019	160	6/5	3/12	48	$160*6/5*3/12$	<b>1</b>
01.04.2019	192	2/1.84	5/12	87	$192*2/1.84*5/12$	<b>2</b>
01.09.2019	240		4/12	80	$240*4/12$	<b>0.5</b>
				215		
		Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ		0.147դրամ	31.5/215	<b>0.5</b>
						<b>4</b>

Հաշվարկներ		
01.04.19 բոնուսային թողարկում՝ 32 միլիոն հատ	160/5*1	
Ընդհանուր բաժնետոմսերի քանակ 192	160+32	
01.09.2019 իրավունքների թողարկում՝ 48 միլիոն հատ	192/4	
Ընդհանուր բաժնետոմսերի քանակ 240	192+48	

Իրավունքի թողարկման նպատակով առաջացած բնուսի գործակցի հաշվարկ			
Թողարկման միջին գին	1.84	$(4*2+1.2*1)/5$	
Բնուսի գործակից	1.09	$2/1.84$	

**Դ.** Այդ 2 դեպքերը հետևյալն են՝

1. Կարճաժամկետ վարձակալությունների դեպքում, երբ վարձակալության ժամանակահատվածը փոքր է 12 ամսից:

2. Վարձակալության հիմքում ընկած ակտիվը ցածր արժեք ունի: Արժեքի ցածր լինելը գնահատվում է, հաշվի առնելով ակտիվի արժեքը, երբ այն նոր է: Այս սկզբունքով շենքը երբեք չի կարող համարվել ցածրարժեք՝ անկախ մաշվածության աստիճանից: Ստանդարտը նշում է ցածրարժեք ակտիվների հետևյալ օրինակներ՝ համակարգիչ, սեղան, աթոռ, հեռախոս:

**Ե.**

Եթե ակտիվի սեփականության իրավունքը ժամկետի վերջում փոխանցվելու է վարձակալին, ապա ակտիվի օգտագործման իրավունքի մաշվածքի համար հիմք է հանդիսանում ակտիվի օգտակար ծառայության ժամկետը:

Այն դեպքում, երբ ակտիվի սեփականության իրավունքը չի փոխանցվելու վարձակալին, ապա ակտիվը պետք է մաշել հետևյալ երկու ժամկետներից՝ ակտիվի օգտակար ծառայության ժամկետ և վարձակալության ժամկետ, նվազագույնում:

**1 միավոր յուրաքանչյուր ճիշտ արտահայտված մտքի համար**